ԲՄԿ ՊՈՒՀ ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատում եմ՝
Իրավունքի Ինստիտուտի տնօրեն
Մ.Ա.Քալաշյան.

«04» հուլիս 2025 թ.

Ինստիտուտ՝ Իրավունքի
Ամբիոն՝ քրեական իրավունքի և քրեական դատավարության

Հեղինակ՝ Ղուկասյան Հ. Հ

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Դասընթաց՝ Փաստաթղթերի քրեագիտական հետազոտում

Մագիստրոս կրթական ծրագիր՝ 042101.04.7

«քրեական իրավունք և դատավարություն»

Դասիչ մասնագիտություն՝ 042101.00.7

1. Ներածություն

Դասընթացի նպատակն է ուսանողին ծանոթացնել փաստաթղթերի նկատմամբ կատարվող ոտնձգության տեսակներին, այն հայտնաբերելու և զննության ենթարկելու մեթոդներին, դատավարական առումով իրեղեն ապացույց հանդիսացող փաստաթղթերի նկատմամբ ծագած հարցերի լուծման կարգին,ինչպես նաև դասընթացը նպատակ ունի ծանոթացնել այս բնագավառում մշակված մեթոդների ու մեթոդիկաների հետ, որոնց միջոցով հետազոտվում են ձեռագրերի, ստորագրությունների և թվային գրառումների ընդհանուր և մասնավոր հատկանիշները, գրի փոփոխման տեսակները, ցույց տալ այդ մեթոդների ներդրման կարևորությունը դատական պրակտիկայում՝ հանցագործությունների դեմ պայքարի բնագավառում:

Առարկայի հիմնական խնդիրներն են ուսումնասիրել դատական ձեռագրաբանության լուծմանն առաջադրվող հարցերի շրջանակները, նրանց նշանակման և կատարման կարգը, ինչպես նաև հետազոտման արդյունքների հիմնավորումը:

2.1. Կրթական վերջնարդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողները պետք է.

իմանան՝

- ստորագրության հետազոտման առանձնահատկությունները;
- ձեռագրաբանական փորձաքննության մասնագիտական տերմինները;
- կրիմինալիստիկական տեխնիկայի հիմունքները;
- կրիմինալիստիկական գիտության ժամանակակից վիճակը ու զարգացման հեռանկարները:

կարողանան՝

- ինքնուրույն մշակել և փորձագետին առաջադրել պարզաբանման ենթակահարցերը;

- ինքնուրույն գնահատել փորձաքննություն նշանակելու անհրաժեշտությունը, նրա արդյունքներն իրեղեն ապացույց հանդիսացող փաստաթղթերի փորձաքննության պայմաններում;
- կիրառել գրի կրիմինալիստիկական փորձաքննության կատարման ավանդական մեթոդիկան փողկապված ձեռագրերի ուսումնասիրման մեթոդները:

ունակ լինեն՝

- արդյունավետ իրագործել քրեական գործերի քննության ընթացքում գիտատեխնիկական միջոցները;
- օգտագործել ժամանակակից դատական փորձաքննությունների հնարավորությունները, տակտիկական հնարքները:

2.2. Դասընթացի աշխատատարության բաշխումն ըստ ուսումնական աշխատանքի տեսակների (ակադեմիական ժամերով)

Ուսումնական աշխատանքների տեսակները	Ամբողջը, ակ. ժամ.	Բաշխում ըստ կիսամյակների					
		1 Կիս.	2 Կիս.	3 Կիս.	4 Կիս.	5 Կիս.	6 Կիս.
1	2	3	4	5	6	7	8
1.Ըստ կիսամյակի ընդհանուր դասընթացի ուսուցման ծանրաբեռնվածությունը	108	108					
1.1. Լսարանային պարապմունքներ:	32	32					
1.1.1.Դասախոսություններ	16	16					
1.1.2.Լաբորատոր աշխատանքներ	16	16					
1.2. Ինքնուրույն աշխատանք	76	76					
Ամփոփիչ ստուգում (քննություն, ստուգարք)	ստուգարք	ստուգարք					

2.3. Դասընթացի թեմատիկ պլան

Դասընթացի բաժինները և թեմաները	Ընդհանուր (ակ. ժամ)	Դասախոսություններ (ակ. ժամ)	Լաբոր. (ակ. ժամ)	Պարապմունքների այլ տեսակներ (ակ. ժամ)
Թեմա 1. <<Կրիմինալիստիկա>> առարկայի հասկացությունը, նպատակը, խնդիրները և համակարգը	10	2	2	2
Թեմա 2. Կրիմ- տեխնիկայի հիմնադրույթները և հիմնախնդիրները				2
Թեմա 3. Կրիմ-տակտիկայի հիմնադրույթները և հիմնախնդիրներ				4
Թեմա 4. Հանցագործությունների քննության մեթոդիկայի հիմնադրույթները և հիմնախնդիրները	10	2	2	4
Թեմա 5 Փաստաթղթեր ի տեխնիկա-կրիմինալիստի կական Հետազոտում				4
Թեմա 6 Փաստաթղթերի քննչական զննությունը	10	2	2	4
Թեմա 7 Սկզբնական բովանդակությունը փոխած փաստաթղթերի Հետազոտումը				4
Թեմա 8 Փաստաթղթի բովանդակությ ան մասնակի փոփոխությունները	10	2	2	4
Թեմա 9 Անընթեռնելի տեքստերի հետազոտումը				4
Թեմա 10 Ստորագրու թյունների տեխնիկական պատճենահանումը	10	2	2	4
Թեմա 11 Մեքենագիր տեքստերի հետազոտումը				4
Թեմա 12 Կնիքների և շտամպների (դրոշմակնիքների) դրոշմների Հետազոտումը	10	1	1	4
Թեմա 13 Գրի կրիմինալիստիկական Հետազոտում	10	1	1	4
Թեմա 14 Ձեռագրի հատկանիշներ	10	2	2	4

Թեմա 15 Տարածական կողմնորոշման ընդհանուր հատկանիշներ				4
Թեմա 16 Ստորագրությունների հետազոտման մեթոդիկան	10	1	1	4
Թեմա 17 Գրի կրիմինալիստիկական հետազոտման մեթոդիկան				4
Թեմա 18 Նյութերի նախապատրաստումը գրի կրիմինալիստիկական փորձաքննություն նշանակելիս	8	1	1	4
Թեմա 19 Ձեռագրաբանական դիագնոստիկ հետազոտություններ				4
Թեմա 20 Այն ձեռագրերի հետազոտությունները,որոնք կատարված են գրողի անսով որ վիճակում հոգեֆիզիոլոգիական				4
Ընդամենը	108	16	16	76

3. Դասընթացի բաժինները և թեմաները

Թեմա 1. <<Կրիմինալիստիկա>> առարկայի հասկացությունը, նպատակը, խնդիրները և համակարգը

<<Կրիմինալիստիկա>> առարկան, պատմությունը, նրա դերը հանցագործությունների դեմ պայքարի գործում նրա տեղը իրավաբանական գիտությունների համակարգում, նրա ներքին համակարգը, մեթոդները, գիտական և տեսական հիմքերը, խնդիրները և դերը հանցագործործությունների քննության ընթացքում:

Թեմա 2. Կրիմ-տեխնիկայի հիմնադրույթները և հիմնախնդիրները

Կրիմ-տեխնիկայի հասկացությունը, խնդիրները, ճյուղերը: Օգտագործվող հիմնական գիտատեխնիկական մեթոդները և միջոցները, քննիչին տրամադրվող տեխնիկական քննչական ճամպրուկը, շարժական: Կրիմ-լաբարատորիա և կրիմ-տեխնիկայի կիրառման արդյունքների քրեադատավարական

ձևակերպման չափանիշները և ձևերը:

Թեմա 3. Կրիմ-տակտիկայի հիմնադրույթները և հիմնախնդիրները

Կրիմ-տակտիկայի հասկացությունը, խնդիրները, տրամաբանության և հոգեբանության աշխատանքի գիտական կազմակերպման և մյուս հատուկ գիտությունների տվյալների օգտագործումը, տակտիկական հնարքների հասկացությունը դանց թույլատրելիության չափանիշները քրեական դատավարությունում: Կիրմ-տակտիկայի և քննչական գործողությունների կատարման դատավարական կարգը, տակտիկական հնարքների կիրառման հնարավորությունները և պայմանները դատաքննության ընթացքում:

Թեմա 4. Հանցագործությունների քննության մեթոդիկայի հիմնադրույթները և հիմնախնդիրները

Հանցագործությունների առանձին տեսակների քննության մեթոդիկայի, քննության պլանավորման, քննության փուլերի հասկացությունները և առանձնահատկությունները, պարզաբանման ենթակա հանգամանքները, ինչպես նաև բնութագրերը, մասնավորապես հափշտակություն, հրկիզումներ, սպանություններ, թրաֆիկինգ, տնտեսական գործունեության դեմ ուղղված կաշառք, տրանսպորտային երթևեկության և անվտանգության և շահագործման կանոնների խախտումների, համակարգչային տեղեկատվական անվտանգության ոլորտում կատարվող հանցավոր խախտումների, թմրանյութերի ապօրինի շրջանառության, ահաբեկչության և այլ հանցագործությունների քննության մեթոդիկան և հիմնախնդիրները:

Թեմա 5. Փաստաթղթերի տեխնիկա-կրիմինալիստիկական հետազոտում

Փաստաթղթերի տեխնիկա-կրիմինալիստիկական հետազոտման հասկացությունը, նպատակներն ու խնդիրները, հետազոտման օբյեկտները դատավարական առումով՝ իրեղեն ապացույց հանդիսացող փաստաթղթերի նկատմամբ ծագած հարցերի լուծման կարգը, փորձաքննությունների նշանակումը, պարզաբանման առաջադրվող հարցերը:

Թեմա 6. Փաստաթղթերի քննչական զննությունը

Փաստաթղթերի զննությունը, նրա խնդիրները, մեթոդները, արդյունքների ամրապնդումը, քրեադատավարական բնութագրի որոշումը, հատկանիշների և առանձնահատկությունների պարզաբանումը, փորձագետին առաջադրվող հարցերը, համեմատական հետազոտման համար փորձագետին ուղղարկվող նյութերը:

Թեմա 7. Սկզբնական բովանդակությունը փոխած փաստաթղթերի հետազոտումը

Փաստաթղթերի բովանդակության փոփոխման հատկանիշները /ջնջում, կեղծում, լվացում, հավելագրում, ուղղում/, հասկացությունները, բնութագրող հատկանիշները, հայտնաբերման եղանակները, փորձագետին առաջադրվող հարցերը, համեմատական հետազոտման համար ուղարկվող նյութերը:

Թեմա 8. Փաստաթղթի բովանդակության մասնակի փոփոխությունները

Հավելագրման հասկացությունը բնութագրող հատկանիշները, հայտնաբերման եղանակները, տեխնիկական հետազոտման ժամանակ կիրառվող տեխնիկական միջոցները, փորձագետին առաջադրվող հարցերը, համեմատական հետազոտման համար ուղարկվող նյութերը:

Թեմա 9. Անընթեռնելի տեքստերի հետազոտումը

Անընթեռնելի տեքստերի հետազոտման հասկացությունը, հայտնաբերման եղանակը, փաստաթղթերի փոփոխված և չընթերցվող տեքստերի փորձագիտական հետազոտման հնարավորությունները և փորձագետին առաջադրվող հարցերը, համեմատական հետազոտման համար ուղարկվող նյութերը:

Թեմա 10. Ստորագրությունների տեխնիկական պատճենահանումը

Ստորագրությունների տեխնիկական կեղծման հասկացությունը, հատկանիշները, հայտնաբերման եղանակները, փորձագիտական հետազոտությունը, համեմատական նմուշներ ստանալը և նման փորձաքննություններում փորձագետին առաջադրվող հարցերը, համեմատական հետազոտման համար ուղարկվող նյութերը:

Թեմա 11. Մեքենագիր տեքստերի հետազոտումը

Մեքենագիր տեքստերի հետազոտման հասկացությունը, հետազոտման կարգը, մեքենագիր փաստաթղթերի շեղումների հայտնաբերման եղանակները, փորձագիտական հետազոտման հնարավորությունները, հետազոտման արդյունքների ֆիքսումը և փորձագետին առաջադրվող հարցերը, համեմատական հետազոտման համար ուղարկվող նյութերը:

Թեմա 12. Կնիքների և շտամպների (դրոշմակնիքների, դրոշմների) հետազոտումը

Կնիքների և շտամպերի /դրոշմակների, դրոշմների/ կեղծիքների հայտնաբերման եղանակները, նրանց փորձագիտական հետազոտման եղանակներն ու հնարավորությունները, կնիքների, դրոշմների, շտամպների հետազոտումը, նմուշների ստացումը՝ համեմատական հետազոտման համար:

Թեմա 13. Գրի կրիմինալիստիկական հետազոտում

Դատական ձեռագրաբանության գիտական հիմունքները և նրա հասկացությունը, գրի հմտությունները, դինամիկական ստերիոտիպը /շարժումների նույնությունը/, գրի անհատականությունը և հարաբերական կայունությունը:

Թեմա 14. Ձեռագրի հատկանիշներ

Գրի նույնացման հատկանիշները, հատկանիշների դասակարգումը, հմտությունները, որպես հատկանիշների ձևավորման հիմք, ձեռագրի ընդհանուր հատկանիշները, կառուցվածքը, մշակվածությունը, չափսը և տարածականությունը, թեքությունը և կապակցվածությունը, սեղմման աստիճանը, գրի մասնավոր հատկանիշները, շարժման բարդությունը, շարժման ձևը, շարժման ուղղությունը, շարժման ձգվածությունը, շարժման քանակը, հաջորդականությունը:

Թեմա 15. Տարածական կողմնորոշման ընդհանուր հատկանիշներ

Այս հատկանիշները հանդիսանում են որպես ձեռագրի ընդհանուր և մասնավոր հատկանիշներ, նրանց հասկացության և նման փորձաքննության ժամանակ

փորձագետին առաջադրվող հարցերը, համեմատական հետազոտման համար ուղարկվող նյութերը:

Թեմա 16. Ստորագրությունների հետազոտման մեթոդիկան

Ստորագրությունների կեղծման հասկացությունը, հատկանիշները, հայտնաբերման եղանակները, փորձագիտական հետազոտությունը, համեմատական նմուշներ ստանալը և նման փորձաքննություններում փորձագետին առաջադրվող հարցերը, համեմատական հետազոտման համար ուղարկվող նյութերը:

Թեմա 17. Գրի կրիմինալիստիկական հետազոտման մեթոդիկան

Հետազոտման փուլերը փորձագետի, եզրակացության գնահատումը դատաքննչական մարմինների կողմից, փորձագետի եզրակացության կառուցվածքը, փորձագետի եզրակացության ստուգումը և գնահատումը:

Թեմա 18. Նյութերի նախապատրաստումը գրի կրիմինալիստիկական փորձաքննություն նշանակելիս

Նյութերի նախապատրաստումը գրի կրիմինալիստիկայում փորձաքննություն նշանակելիս, նմուշների ստացում, համեմատական նմուշների ստացում, ձեռագրի ազատ, պայմանական ազատ և փորձարարական նմուշների առկայություն:

Թեմա 19. Ձեռագրաբանական դիագնոստիկ հետազոտություններ

Դիագնոստիկա, իդենտիֆիկացիա հասկացությունները, դասակարգումը ըստ տեսակների և հատկանիշների:

Թեմա 20. Այն ձեռագրերի հետազոտությունները, որոնք կատարված են գրողի անսովոր հոգեֆիզիոլոգիական վիճակում

Ձեռագրի մասնավոր հատկանիշների հետազոտությունը, հոգեֆիզիոլոգիական վիճակի հասկացությունը, կատարողի անձը, նրա հոգեբանական

առանձնահատկությունները և ձեռագրում մասնավոր հատկանիշների առանձնահատկությունները, ինչպես նաև նման փորձաքննություններ անցկացնելու ժամանակ փորձագետին առաջադրվող հարցերը, համեմատական հետազոտման համար ուղարկվող նյութերը:

4. Գրականության ցանկ

Հիմնական

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, ընդունվել է Ազգային Ժողովի կողմից 1 հուլիսի 1998 թ.
2. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, ընդունվել է Ազգային Ժողովի կողմից 30.06.2021 թ.
3. Օհանյան Լ.Պ. Կրիմինալիստիկա /ԵՊՀ դասագիրք/
4. Փորձագիտական աշխատանքի ծանոթություն ԵԴՓՀԻ դասագիրք
5. Չախոյան Ա.Ս. Մասնագետի գիտելիքների և դրանց կիրառման քրեադատավարական և կրիմինալիստիկական հիմնախնդիրները։ Երևան, ԵՊՀ հրատ. 2013թ.
6. Ենգիբարյան Վ.Գ., Չախոյան Ա.Ս. Կրիմինալիստիկայի գործնական հիմունքները, Երևան 2013թ.
7. Օհանյան Լ. Պ. Հայոց լեզվով կատարված ձեռագրերի նույնացման հատկանիշների դասակարգումը և նկարագրումը | Երևան 1981, 128 էջ:
8. Ենգիբարյան Վ. Առանձին քննչական գործողությունների կատարման տակտիկա: Կրիմինալիստիկական տակտիկա | Գիտագործնական ձեռնարկ Երևան, Թասկ ՍՊԸ, 2018, 732 էջ
9. Ենգիբարյան Վ. Գ. Հանցագործությունների քննության մեթոդիկա: Կրիմինալիստիկական մեթոդիկա: | Դասագիրք բուհերի իրավաբանական ֆակուլտետների ուսանողների համար՝ երաշխավորված ՀՀ ԿԳՆ կողմից, Երևան, Թասկ, 2017, 608 էջ
10. Назначение и производство судебных экспертиз. Пособие для следователей,

судейи экспертов М.Юрид. Лит. 1988г.

11. Козинер Э.Пю Тюриков В.В Классификация задач Судебно-почерковедческой экспертизы М.1987г.
12. Возможности производства судебной экспертизы в государственных судебно-экспертных учреждениях Минюста России М. 2004г.
13. “Судебно-почерковедческая экспертиза” учебник в двух томах
14. Энциклопедия судебных экспертиз М. том 1,2,3, 2008г.

Լրացուցիչ գրականության ցանկ

1. Коровин Н. К. Криминалистика [Электронный ресурс]: учеб. пособие / Н.К. Коровин. – Ново-сибирск: Изд-во НГТУ, 2014. - 308 с. //ЭБС «Книгафонд»: [сайт]. – Режим доступа: http: //www.knigafund. ru/
2. Мухин, Г. Н. Криминалистика [Электронный ресурс]: учеб. пособие / Г. Н. Мухин, Д. В. Исютин-Федотков.– Минск : ТетраСистемс, 2012. – 240 с. //ЭБС
3. Криминалистика: учебник/ под ред. В.Е.Ищенко.- М Проспект, 2015г.-504с.
4. Криминалистика (Электронный ресурс): учебник для студентов вузов /под ред. А.Ф.волынского, В.П.Лавров. -2-е изд. перераб. и доп.- М.ЮНИТИ-ДАНА:
5. Закон и право, 2012г. -943с. //ЭБС <<Книгафонд>>.–Режим доступа: http://www.knigafund.ru/
6. Криминалистика: учебник/ Т.В.Аверьянова /и др./. -3-е изд., перераб. и доп.- М.: Норма; Инфра-М, 2010. -944с.
7. Криминалистика. Курс лекций /Электронный ресурс/: учебное пособие /Д.И.Аминов, П.В.Федотов, Р.А.Адельханян. –М.: ЮНИТИ-ДАНА, 2011. //ЭБС <<Книгафонд>>.- Режим доступа: http://www.knigafund.ru/
8. Криминалистика [Электронный ресурс]: сборник задач / сост. Н. Б. Нечаева. – Ставрополь: Изд-во СКФУ, 2015. – 82 с. //ЭБС «Книгафонд»: Режим доступа: http: //www.knigafund. ru/
9. Комиссарова Я. В. Криминалистика + криминалисты = Опыт борьбы с преступностью: учебно-практическое пособие / Я. В. Комиссарова, Е. Г. Килессо, В. О. Перч.- М.: Юрлитинформ, 2005. - 200 с.

10. Шумак Г. А. Криминалистика [Электронный ресурс]: Ответы на экзаменационные вопросы / Шумак Г. А., Хлус А. М. – Минск: ТетраСистемс, 2012. - 176 с. //ЭБС «Книгафонд»: [сайт]. – Режим доступа: http: //www.knigafund. ru/ Никифоров В.Г. Процессуальный и криминалистический аспекты призводства судебного следствия /Электронный ресурс/: монография /В.Г.Никифоров. - М.: ЮНИТИ- ДАНА: Закон и право, 2010. -144 с. –(Научные издания для юристов). // ЭБС <<Книгафонд>>. /сайт/. - Режим доступа: http://www.knigafund.ru/
11. Прорвич В.А. Судебно-оценочная экспертза. Правовые, организационные и научно- методические основы //Электронный ресурс/: учеб. Пособие для студентов вузов, обучающихся по специальностям 030502 <<Судебная экспертиза>>, 030500 <<Юриспруденция>> /В.А. Прорвич. -2-е изд, перераб. и доп.- М.: ЮНИТИ-ДАНА, Закон и право, 2012.-399 с. //ЭБС <<Книгафонд>>. /сайт/. - Режим доступа: http://www.knigafund.ru/
12. Корноухов, В.Е. Методика расследования преступлений: теоритические основы: учебное издание /В.Е.Корноухов, -М.: Норма, ИНФРА-М, 2012.- 224с.

Հարցաշար

1. Փաստաթղթերի տեխնիկա-կրիմինալիստիկական հետազոտման հասկացությունը, նպատակները ու խնդիրները:
2. Հետազոտման օբյեկտները դատավարական առումով՝ իրեղեն ապացույց հանդիսացող փաստաթղթերի նկատմամբ ծագած հարցերի լուծման կարգը, փորձաքննությունների նշանակումը, պարզաբանման առաջադրվող հարցերը:
3. Փաստաթղթերի զննությունը, նրա խնդիրները:
4. Փաստաթղթերի զննության մեթոդները:
5. Փաստաթղթերի զննության արդյունքների ամրապնդումը:
6. Փաստաթղթերի զննության քրեադատավարական բնութագրի որոշումը:
7. Փաստաթղթերի զննության հատկանիշների և

առանձնահատկությունների պարզաբանումը։

8. Փաստաթղթերի փորձաքննության համար փորձագետին առաջադրվող հարցերը։
9. Փաստաթղթերի փորձաքննության համեմատական հետազոտման համարփորձագետին ուղարկվող նյութերը։
10. Փաստաթղթերի բովանդակությունը փոխող հատկանիշները /ջնջում, կեղծում,լվացում, հավելագրում, ուղղում/ հասկացությունները։
11. Փաստաթղթերի փոփոխված բովանդակությունը բնութագրող հատկանիշները։
12. Փաստաթղթերի բովանդակության փոփոխման հայտնաբերման եղանակները։
13. Փաստաթղթերի բովանդակության փոփոխման վերաբերյալ փորձագետին առաջադրվող հարցերը։
14. Փաստաթղթերի բովանդակության փոփոխման վերաբերյալ համեմատականհետազոտման համար ուղարկվող նյութերը։
15. Հավելագրման հասկացությունը բնութագրող հատկանիշները։
16. Հավելագրման հայտնաբերման եղանակները։
17. Հավելագրման տեխնիկական հետազոտման ժամանակ կիրառվող տեխնիկական միջոցները։
18. Հավելագրման փորձաքննության վերաբերյալ փորձագետին առաջադրվող հարցերը։
19. Հավելագրման փորձաքննության վերաբերյալ համեմատական հետազոտման համար ուղղարկվող նյութերը։
20. Անընթեռնելի տեքստերի հետազոտման հասկացությունը։
21. Անընթեռնելի տեքստերի հայտնաբերման եղանակը։
22. Փաստաթղթերի փոփոխված և չընթերցվող տեքստերի փորձագիտական հետազոտման հնարավորությունները և փորձագետին առաջադրվող հարցերը։

23. Անընթեռնելի տեքստերի համեմատական հետազոտման համար ուղարկվող նյութերը:
24. Ստորագրությունների տեխնիկական կեղծման հասկացությունը:
25. Ստորագրությունների տեխնիկական կեղծման հատկանիշները:
26. Ստորագրությունների տեխնիկական կեղծման հայտնաբերման եղանակները:
27. Ստորագրությունների տեխնիկական կեղծման փորձագիտական հետազոտությունը:
28. Ստորագրությունների տեխնիկական կեղծման համեմատական նմուշներ ստանալը և նման փորձաքննություններում փորձագետին առաջադրվող հարցերը:
29. Ստորագրությունների տեխնիկական կեղծման համեմատական հետազոտման համար ուղարկվող նյութերը:
30. Մեքենագիր տեքստերի հետազոտման հասկացությունը:
31. Մեքենագիր տեքստերի հետազոտման կարգը:
32. Մեքենագիր փաստաթղթերի շեղումների հայտնաբերման եղանակները:
33. Մեքենագիր տեքստերի փորձագիտական հետազոտման հնարավորություն ները:
34. Մեքենագիր տեքստերի հետազոտման արդյունքների ֆիքսումը և փորձագետին առաջադրվող հարցերը:
35. Մեքենագիր տեքստերի համեմատական հետազոտման համար ուղարկվող նյութերը:
36. Կնիքների և շտամպերի /դրոշմակների, դրոշմների/ կեղծիքների հայտնաբերման եղանակները նրանց փորձագիտական հետազոտման եղանակներն ու հնարավորությունները:
37. Կնիքների դրոշմների, շտամպների հետազոտումը, նմուշների ստացումը համեմատական հետազոտման համար:
38. Դատական ձեռագրաբանության գիտական հիմունքները և նրա հասկացությունը:

39. Գրի հմտությունները։
40. Գրի դինամիկական ստերիոտիպը /շարժումների նույնությունը/։
41. Գրի անհատականությունը և հարաբերական կայունությունը։
42. Գրի նույնացման հատկանիշները։
43. Գրի նույնացման հատկանիշների դասակարգումը։
44. Գրի հմտությունները, որպես հատկանիշների ձևավորման հիմք։
45. Ձեռագրի ընդհանուր հատկանիշները։
46. Ձեռագրի ընդհանուր կառուցվածքը։
47. Ձեռագրի ընդհանուր մշակվածությունը։
48. Ձեռագրի ընդհանուր չափսը և տարածականությունը։
49. Ձեռագրի ընդհանուր թեքությունը և կապակցվածությունը։
50. Ձեռագրի սեղմման աստիճանը։
51. Գրի մասնավոր հատկանիշները։
52. Ձեռագրի շարժման բարդությունը։
53. Ձեռագրի շարժման ձևը։
54. Ձեռագրի շարժման ուղղությունը։
55. Ձեռագրի շարժման ձգվածությունը։
56. Ձեռագրի շարժման քանակը։
57. Ձեռագրի ընդհանուր հաջորդականությունը։
58. Ստորագրությունների կեղծման հասկացությունը։
59. Ստորագրությունների կեղծման հատկանիշները։
60. Ստորագրությունների կեղծման հայտնաբերման եղանակները։
61. Ստորագրությունների կեղծման փորձագիտական հետազոտությունը։
62. Ստորագրությունների կեղծման համար համեմատական նմուշներ ստանալը և նման փորձաքննություններում փորձագետին առաջադրվող հարցերը։
63. Ստորագրությունների կեղծման համեմատական հետազոտման համար ուղարկվող նյութերը։

64. Հետազոտման փուլերը, փորձագետի եզրակացության գնահատումը դատաքննչական մարմինների կողմից։
65. Փորձագետի եզրակացության կառուցվածքը։
66. Փորձագետի եզրակացության ստուգումը և գնահատումը։
67. Ձեռագրի մասնավոր հատկանիշների հետազոտությունը։
68. Կատարողի հոգեֆիզիոլոգիական վիճակի հասկացությունը։
69. Կատարողի անձը, նրա հոգեբանական առանձնահատկությունները և ձեռագրում մասնավոր հատկանիշների առանձնահատկությունները։

5. Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները։

Խմբային քննարկում. Նպատակը՝ մտքերի փոխանակում կոնկրետ առաջադրված տեսական հիմնախնդիրների վերաբերյալ։

Գնահատման չափանիշները՝ տեսական պատրաստվածություն, հղումներ հեղինակներին, սեփական կարծիքի հիմնավոր և տրամաբանական փաստարկվածություն, ակադեմիական ակտիվություն, գիտական էթիկայի պահպանման կարողություն։

Ելույթներ ըստ թեմայի. Նպատակը՝ թեմայի կամ հարցի խորացված ուսումնասիրում։

Գնահատման չափանիշները՝ պլանի առկայություն և դրան հետևելու կարողություն, տեսական և իրավական աղբյուրների օգտագործման էթիկա, հղումների ճշգրտություն, տեսակետների պատճառաբանվածություն։

Թեստավորում. Նպատակը՝ ստուգել ուսանողների գիտելիքները։

Վերջնական քննություն. Նպատակը՝ ստուգել և գնահատել ուսանողների գիտելիքները։